

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
պայմանագիր կնքելու որոշման մասին

Սույն հայտարարությունը հրապարակվում է «17» օգոստոսի 2023թ.-ին՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջների հիմքով և սահմանված նպատակներին համապատասխան:

ՀՀ կենտրոնական բանկը ստորև ներկայացնում է **«ՀՀ կենտրոնական բանկի վարչական շենքի բարձրավոլտ և ցածրավոլտ էլեկտրոսնուցման ենթակայանների արդիականացման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպության ընտրության CBA-2023-034 ծածկագրով բաց մրցույթի»** ընթացակարգին ներկայացված հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ամփոփ տեղեկատվությունը:

Բաց մրցույթին մասնակցել են հետևյալ կազմակերպությունները՝

1. «ՀԷՄ» ՍՊԸ
2. «Ինտեք Էլեկտրիկ» ՍՊԸ
3. «ԹԻՄ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ

Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխան՝ ստուգվել են հայտով ներկայացված փաստաթղթերի, ինչպես նաև մասնակիցների ներկայացրած գնման առարկայի բնութագրերի համապատասխանությունը օրենքով և հրավերով սահմանված պահանջներին, գնահատվել են մասնակցության իրավունքը և որակավորման չափանիշները:

ՀՀ կենտրոնական բանկի Գնահատող հանձնաժողովի «17» օգոստոսի 2023թ. նիստի ընթացքում ամփոփվել է վերը նշված բավ մրցույթի արդյունքները: Հաղթող մասնակից է ճանաչվել «ՀԷՄ» ՍՊ Ընկերությունը:

ՀՀ կենտրոնական բանկի Գնահատող հանձնաժողովի քարտուղար
Սիրան Եգանյան

Պատվիրատու՝ ՀՀ կենտրոնական բանկ